Զօրքերը դասաւորուած էին հետևեալ կերպով. Ղազախի զօրամասի պետ գնդ. Կորոլկովը, ունենալով իր հրամանատարութեան տակ մի ձիաւոր հարիւրեակ, 4րդ հետևակ գունդը և Ղազախի միլիցիոն գունդը՝ բռնում էր ամբողջ հայ-վրացական սահմանագիծը (Կողբ—Քարվանսարա), ուր կարգը մինչև 1918 թիւը բնաւ չխանգարուեց:

Ղարաքիլիսայում գտնուող թիւրքերի դէմ — Բոզիքենդ—Վոսկրեսենովկա—Վարդանլու (Վարդանլուն չէզոք վայր էր) — կանգնած էին 2րդ ձիաւոր գնդի երկու հարիւրեակները՝ սպայ Կուռո Թարխանեանի հրամանատարութեամբ:

Ընդհանուր պահեստը, գնդ. Միրիմանեանի գլխաւորութեամբ, բաղկացած էր 4րդ գնդի 2 գումարտակներից՝ Դիլիջանում և 1 գումարտակից՝ Նիկիտինոյում:

Ստացած հրամանի վրա, հոկտ. 18-ին Դրօն կարգադրեց Կուռո Թարխանեանին, 2 հարիւրեակ ձիաւորներով շտապ գնալ-գրաւել Դսեղ—Քոլաղերան—Կաչական գիծը, իսկ Բաշ Աբարանի զօրամասը — առաջին ձիաւոր գունդ, 5րդ հետևակ գունդ, 1 մարտկոց — հրամանատարութեամբ գնդ. Ղորղանեանի՝ անցնելով Սպիտակի լեռնանցքը՝ գնաց բռնեց Ջալալ-Օղլի—Գերգեր—Կուրթան գիծը: Կարգադրութիւնը կատարուեց շատ արագ, և հոկտ. 21-ին արդէն շրջանը ամբողջութեամբ հայերի ձեռքին էր, գրեթէ առանց միջադէպի:

Մի-երկու աննշան միջադէպեր պատահեցին հայ և վրացի զօրամասերի միջև Ջալալ-Օղլիի և Դսեղի շրջաններում: Առաջինում, հակառակ մերոնց նախազգուշացման, վրացիները հետախոյզների մի խումբ ուղարկեցին Կաչականի կողմը, բայց մեր ձիաւորների կրակով յետ շպրտուեցին: Դսեղի կողմը վրացիները առաջ քաշեցին գերմանացի զինուորների մի խումբ, որ մտաւ հայերի դրաւած Քարինջ գիւղը և ձերբակալուեց ու զինաթափուած յետ ուղարկուեց՝ մեր զօրամասի կողմից: Երկու օր յետոյ, վերից եկած հրամանով, զէնքերն էլ վերադարձուեցին գերմանացիներին: Այս միջադէպը առիթ ծառայեց զօր. Ֆոն-Քրեսի միջամտութեան: Առհասարակ, Լոռի-Փամբակի գրաւումը ահագին խլրտում առաջ բերեց Թիֆլիսում:

Հոկտեմբերից սկսած, արտաքին աշխարհում տեղի ունեցան արտակարգ դէպքեր: Բուլղարիան պարտուած՝ դուրս էր եկել պատերազմողների շարքից: Աւստրահունգարական կայսրութիւնը ճարճատում էր փլուզումի նախօրեակին: Ամերիկայի մուտքը պատերազմի մէջ նախորոշում էր պատերազմի վաճխանը: Եւ որքան ընդհանուր հաշտեցարդարի օրը մօտենում էր, այնքան փոխուում էին տրամադրութիւնները և Հայաստանում ու Հայաստանից դուրս գտնուող հայկական շրջանների մէջ: Կասկածն ու յոռետեսութիւնը սկսում էր տեղի տալ լաւատեսութեան:

Հայաստանի Հանրապետութեան կեանքի առաջին ամիսներում շատ ուժեղ էր թերահաւատութիւնը: Մանաւանդ, Թիֆլիսում, Հայաստանի մասին խօսելիս ու գրելիս «հանրապետութիւն», «անկախութիւն» բառերը արտասանւում էին հեգնանքով ու չակերտների մէջ էին առնւում: Հայ սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-յեղափոխականները, հակառակ որ